

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Հայաստանի Հանրապետությունում 2011թ. անցկացվելիք մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի նիստի

20.05.2009 թ.

Ժամը 10⁰⁰

1. Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշվին հավանություն տալու մասին:

/Ձեկուցող՝

ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման
և անցկացման համապետական հանձնաժողովի
նախագահի տեղակալ,
ՀՀ ազգային վիճակագրական ծառայության
նախագահ **Ս.Մնացականյան /**

2. ՀՀ 2011 թվականի մարդահամարի հիմնական միջոցառումները՝ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 2010թ. ռաունդի Մարդահամարների և կացարանների հաշվառումն անցկացնելու ուղղությամբ Եվրոպական վիճակագիրների հանձնարարականների լույսի ներքո:

/Ձեկուցող՝

ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման
և անցկացման համապետական հանձնաժողովի
քարտուղար,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի
մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ
Կ.Կույումջյան/

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետությունում 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի 2009 թվականի մայիսի 20-ի առաջին նիստի

Մասնակցում էին՝ հանձնաժողովի 28 ³ Կ¹³ ՍԿ՝ՈՇՕ 23-Ա:

Բացակայում էին՝ ՀՀ ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (նախագահի տեղակալ)՝ Հ.Հակոբյանը, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ՝ Գ.Ազարյանը, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ՝ Ա.Սարիբեկյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ՝ Շ.Քոչարյանը, Երևանի քաղաքապետ՝ Գ.Բեգլարյանը:

Հրավիրված էր՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցչի տեղակալ՝ Գ.Հայրապետյանը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. ՀՀ 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշվին հավանություն տալու մասին:
2. ՀՀ 2011 թվականի մարդահամարի հիմնական միջոցառումները ՄԱԿ-ի Եվրոպական Տնտեսական հանձնաժողովի 2010թ. Ռաունդի մարդահամարների և կացարանների հաշվառումն անցկացնելու ուղղությամբ Եվրոպական վիճակագիրների հանձնարարականների լույսի ներքո:

Բացման խոսքով հանդես եկավ նիստը նախագահող՝ ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահ, ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար՝ **պրն.Ա.Գևորգյանը**: Նա ողջունեց հանձնաժողովի անդամներին անդրանիկ նիստի կապակցությամբ և առաջարկեց աշխատանքային քննարկումները կազմակերպել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից նախապես ներկայացված օրակարգի հաջորդականությունով: Առաջին հարցը ներկայացնելու համար նա խոսքը փոխանցեց հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ պրն. Ս.Մնացականյանին:

Ս.Մնացականյան - Նա շնորհակալություն հայտնեց հանձնաժողովի նախագահին և անդամներին մասնակցության և հարցը կարևորելու համար: Ներկայացրեց 2009-2013թթ.-ի համար հաշվարկված ՀՀ 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշիվը: Այն նախապես տրամադրվել էր հանձնաժողովի անդամներին և Ս.Մնացականյանը պարզաբանեց, որ ներկայացված նախահաշիվը մշակված է հինգ տարիների կտրվածքով և բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ սահմանված հիմնական հոդվածների: Միակ բացառությունն այն է, որ մեր կողմից դրանք պայմանականորեն համարակալվել են, որպեսզի յուրաքանչյուր հոդվածին վերաբերվող համապատասխան պարզաբանումները հնարավոր լինի գտնել նախահաշիվին կից ներկայացված փաստաթղթում: 2009-2013թթ. գործառույթների երեք փուլերով՝ նախապատրաստական, անցկացման և տեղեկատվության վերլուծության, սահմանված միջոցառումների արժեքը կազմում է շուրջ 2.5 մլրդ դրամ: Ծախսերի հիմնական մասը (մոտ 1.9 մլրդ.դրամ) նախատեսված է 2011թ. համար: Ընդհանուր ծախսերի առավել մեծ մասնաբաժինը նախատեսված է մարդահամարի աշխատանքներին ժամանակավոր

ներգրավվելիք աշխատողների (հաշվարարներ, հրահանգիչ-հսկիչներ, մարդահամարային տեղամասի վարիչներ և այլն) աշխատանքի վարձատրության համար՝ մոտ 1.5 մլրդ.դրամ: Ս.Մնացականյանն ընդգծեց, որ գալիք մարդահամարը կանցկացվի 2001թ. մեխանիզմներով՝ տեղեկատվությունը կհավաքագրվի հարցման և հարցաթերթերը լրացնելու միջոցով և ներկայացրեց այն 5 հարթությունները, որոնց միջոցով կիրականացվեն մարդահամարային տեղեկատվության ամփոփումը՝ **I) հաշվային, II) հրահանգչական, III) մարդահամարային, IV) ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններ և V) ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչություն:** Նա ընդգծեց, որ այս գործառույթում հիմնական դերակատարները պետք է լինեն հաշվարարները, որոնց հավաքագրման գործընթացում ակնկալվելու է համայնքների ղեկավարների աջակցությունն առ այն, որ նրանք լինեն մանկավարժներ, բժիշկներ և համայնքներում բնակչության կողմից հարգանք վայելող անձինք, այլ ոչ թե ֆիսկալ գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչներ: Նա նշեց նաև, որ հաշվի առնելով 2001թ. մարդահամարի փորձը, մարդահամարի նախապատրաստման և անցկացման գործառույթներում ակնկալում ենք նաև միջազգային կառույցների աջակցությունը: Այդ իսկ նկատառումով այսօրվա նիստին հրավիրվել է նաև ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցչի տեղակալ՝ Գ.Հայրապետյանը, ում միջոցով փորձում ենք մարդահամարի նախապատրաստման և անցկացման գործառույթներում առկա խնդիրները հասցնել նաև դոնոր հանրությանը:

Նիստը նախագահողի առաջարկությամբ զեկուցողին ուղղվեցին հարցեր.

Վ.Հարությունյան - 2011թ. համար <<պարտադիր սոցիալական ապահովության վճարներ>> հոդվածում ներառված են նաև ժամանակվոր աշխատանքներում ներգրավված աշխատողների աշխատավարձերից հաշվարկված ՊՍԱՎ-երը և այդ պատճառով այդ գումարը գերազանցում է նախորդ հոդվածող հաշվարկված մարդահամարի վարչության աշխատողների աշխատավարձի չափը և հաշվի առնելով, որ նախահաշիվը պետք է հաստատվի առանց այն ուղեկցող պարզաբանումների առաջարկեց այդ գումարներն առանձին ներկայացնել:

Ա.Մնացականյան – Այդ գումարը մեկ հոդվածում միավորելու հիմնական նպատակը եղել է այն հանգամանքը, որ մենք առաջնորդվել ենք 2001թ. մարդահամարի փորձով, որ ՊՍԱՎ-երը ամբողջական արտացոլված լինեն նախահաշվում, դոնորների համար այդ գումարը մեկ միավորով ներկայացնելու նկատառումով: Դոնորների հանրությունն ունի սահմանափակում առ այն, որ դրամաշնորհային միջոցներից հարկեր չպետք է վճարվեն: Ձեր կողմից արված առաջարկով տարբերակը նախատեսված է ՀՀ ֆինանսների նախարարության հետ քննարկումների համար:

Գ.Եգանյան - Նախահաշվի հոդվածների անվանումները, մասնավորապես՝ 2.12- <<գրասենյակային նյութեր և հագուստ>>, 2.13- <<տրանսպորտային նյութեր>>, 2.14 - <<կենցաղային և հանրային սննդի նյութեր>> հոդվածներինը թյուրըմբռնման տեղիք կարող են տալ:

Ա.Մնացականյան – Ինչպես ես արդեն վերը նշեցի, դրանք համապատասխանում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ սահմանված հիմնական հոդվածներին, որոնք միայն այս նպատակով չէ, որ կիրառություն ունեն:

Նույն հարցի կապակցությամբ իր պարզաբանումը տվեց նաև.

Ա.Զանգուղազյանը - Հավաստեց, որ թեև նշված հոդվածների անվանումները բուն գործառույթին չվերաբերող կարող են թվալ, սակայն դրանք ընդհանրացված անվանումներ են, որոնք սահմանված են բյուջետային բոլոր գործառույթների համար:

Ա.Ավետիսյան - Ձեր կողմից ներկայացված մարդահամարային տեղեկատվության ամփոփման հարթություններում Երևան քաղաքը ներկայացված է մարզերի թվում, սակայն կարծում եմ այն պետք է առանձնացնել՝ դրա կարգավիճակի փոփոխությունով պայմանավորված:

Ս.Մնացականյան – Ձեր նկատառումը կգործարկվի մայիսի 31-ից հետո, երբ Երևանն իր նոր կարգավիճակով՝ օրենքի համաձայն արդեն հանդես գա որպես համայնք, իսկ մինչ այդ այն դեռևս ունի մարզի կարգավիճակ:

Ա.Գևորգյանը հստակեցրեց նաև, որ ներկայացված փաստաթղթերը նախատեսված են կիրառվել մինչ Երևան քաղաքի ընտրությունները: Բացի այդ նա հավելեց, որ ՀՀ կառավարության 26.03.2009թ. թիվ 301-Ն որոշումով հաստատվել է նաև 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման Երևան քաղաքի հանձնաժողովի կազմը, որը կգրառվի Երևան քաղաքի խնդիրներով և ի տարբերություն նախորդ մարդահամարի, երբ այն ղեկավարում էր քաղաքապետը, այս անգամ այդ հանձնաժողովը կղեկավարի ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ՝ պրն.Վ.Տերտերյանը:

Ա.Ջանջուղազյանը - 2001թ. մարդահամարի ծախսերի 80% իրականացվեց միջազգային դոնորների աջակցությամբ: Ներկայումս ևս բյուջեն հիշատակված միջոցները չունի, և կուզենայի միանալ նախորդ առաջարկին՝ դիմելու դոնորներին այս անգամ ևս աջակցել Հայաստանին հերթական մարդահամարի անցկացման գործում:

Գ.Հայրապետյան – Ես հանդիպել եմ դոնորների մեծամասնության հետ և նրանք մեկ հարց են բարձրացնում, թե արդյոք ինչ մասնաբաժնով է այս անգամ լինելու կառավարության ներդրումը մարդահամարին առնչվող գործառնություններին:

Ա.Գևորգյան - նախ հասկանանք քննարկումների տրամաբանությունը՝ որքան են կազմում ծախսերը, ինչ հնարավորություններ ունենք առաջիկա տարիների համար, ֆինանսների նախարարության հետ քննարկենք մեր հնարավորությունները (մինչև հունիսի 5-ը) և արդյունքում կունենանք իրատեսական տվյալներ: Կզեկուցենք ՀՀ վարչապետին, այնուհետև մենք կհանդիպենք դոնորների հետ և կներկայացնենք պետության մասնաբաժինը, առնվազն նախորդի չափով: Ես միանում եմ պրն.Մնացականյանի և պրն.Ջանջուղազյանի առաջարկին և դիմում եմ դոնորներին 2011թ. մարդահամարի գործառնություններին աջակցելու խնդրանքով: Այնուհետև մենք հաջորդ նիստում մեր գործընկերներին կներկայացնենք թե ինչ արդյունքների ենք հասել:

Ա.Գևորգյանը օրակարգի երկրորդ հարցը ներկայացնելու համար խոսքը փոխանցեց համապետական հանձնաժողովի քարտուղար, ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ՝ տ-ն.Կ.Կույումջյանին:

Կ.Կույումջյան - Նա համառոտ անդրադարձավ մարդահամարի դերին ու նշանակությանը, ներկայացրեց բնակչությանը վերաբերվող տվյալների այլ բազաների նկատմամբ դրա առավելությունը, ՄԱԿ-ի Եվրոպական Տնտեսական հանձնաժողովի 2010թ. Ռատուդի մարդահամարների և կացարանների հաշվառումն անցկացնելու համար Եվրոպական վիճակագիրների կողմից առաջարկվող նորարական (ինովացիոն) տեխնոլոգիաները և դրանց կիրառության հնարավորությունները մեր երկրում, ինչպես նաև ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման հիմնական գործառնությունները, անդրադառնալով առանձին նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցված աշխատանքների ուղղություններին, մասնավորապես քարտեզագրությանը, քաղաքների և խոշոր գյուղերի (5000 և ավել բնակչությամբ) հասցեային տնտեսությանը, բնակչության առանձին խմբերի՝ զինծառայողների, քննչական մեկուսարաններում գտնվող, քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող անձանց, հյուպատոսական և դիվանագիտական հիմնարկների անձնակազմերի հաշվառման կարգերը մշակելուն և այլ հարցերի:

Հարց՝

Ա.Գևորգյան – Ինչու հանձնաժողովի կազմում ներառված չէ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ, այն դեպքում երբ քրեակատարողական հիմնարկները գտնվում են այդ համակարգում :

Պատասխան - ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկման գործառույթում ՀՀ արդարադատության նախարարության գրավոր պատասխանում առաջարկվեց հանել նախարարության ներկայացուցչին:

Ա. Գևորգյան - Առաջարկեց պատրաստել ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություն կատարելու նախագիծ՝ հանձնաժողովի կազմում ՀՀ արդարադատության նախարարության տեղակալի ներառելու վերաբերյալ:

Ա. Գևորգյան - Ինչ առաջարկություն ունեք առաջիկա ժամանակաշրջանում հանձնաժողովի նիստերի հրավիրման պարբերականության վերաբերյալ: Եռամսյակը մեկ, թե այլ պարբերականությամբ:

Պատասխան - Ս.Մնացականյան

Թերևս հարկ կլինի նիստերը գումարել ըստ անհրաժեշտության՝ մինչ ֆինանսավորման աղբյուրների հարցում որոշակիություն ձեռք բերելը:

Ա. Գևորգյան - Իսկ առաջիկայում մարզային հանձնաժողովների նիստերի անհրաժեշտություն երբ կծագի:

Ս.Մնացականյան - Այդ հարցում կողմնորոշումը ևս բխում է ֆինանսավորման աղբյուրը որոշակիացնելու խնդրի հետ: Ենթադրելի է տարեվերջին կամ հաջորդ տարեսկզբին:

Ա. Գևորգյան - Այդուհանդերձ, կառաջարկեմ հունիսի կեսերին ինձ մոտ կազմակերպվող մարզպետների խորհրդակցության ժամանակ նրանց ևս ներկայացնել մարդահամարի հիմնական միջոցառումները, դրանցից բխող մարզպետներին տրվելիք հանձնարարականների հարցում նախապես կողմնորոշվելու և մարզպետներին իրազեկելու նկատառումով:

Հարցերի միջոցով պարզաբանվեցին նաև մարդահամարի գործառույթներում ժամանակավոր ներգրավվելիք մարդահամարային աշխատողների հավաքագրման, ինչպես նաև քարտեզագրությանն առնչվող հարցեր:

Հանձնարարվեց.

1. ՀՀ ԱՎԾ-ին և ՀՀ ֆինանսների նաաախարարությանը՝ համատեղ քննարկել նախահաշվի ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման մասնաբաժնի հնարավորությունները (չափերը) և մինչև հունիսի 5-ը եզրակացությունը ներկայացնել հանձնաժողովի նախագահին:
2. Պատրաստել ՀՀ կառավարության որոշման նախագիծ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցչին (նախարարի տեղակալի) ևս հանձնաժողովի կազմում ներգրավելու համար:

Որոշվեց.

Հավանություն տալ <<ՀՀ 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշվին>>՝ որոշում N1 (կցվում է):

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ փոխվարչապետ,

ՀՀ տարածքային կառավարման նախարար

Ա. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության

աշխատակազմի մարդահամարի և

ժողովրդագրության բաժնի պետ

Կ. Կույունջյան